Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.11.2020թ. թիվ 2011884845 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<29>> 12 2020թ. 7-13- 16166 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արամ Սարգսյանի ՄԴ/155265-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան փողոցի 27-րդ շենքի 30-րդ բնակարանի բնակիչ Արամ Սարգսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011884845 որոշումը՝ նշելով, որ իրավախախտում չի կատարել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 38-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 5-րդ, 7-րդ, **9-րդ**, 12-րդ, 13-րդ, 19-րդ կամ 30-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութից հստակ երևում է, որ 30.10.2020թ ժամը 13:38-ին, դիմումատուի կողմից վարած տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Աճառյան-Բաբաջանյան փողոցների խաչմերուկի հատվածում առջևի

անիվներով ամբողջությամբ չի հատում համընթաց ուղղության տրանսպորտային հոսքերը բաժանող հոծ գիծ գծանշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.11.2020թ. թիվ 2011884845 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արամ Սարգսյանին:

Ե. Կարապետյան

Կատարող՝ Հ.Կարապետյան
Հեռ. 011-54-47-83